

Ա՛ն քեզի հշկհն նոր ոճ մ՛ ալ, եթէ մարդկերանց հետ չպատահեցաւ, յայտ է թէ այդ դժբաղդութիւնը թատրոնի մկներին հետ պատահել է: Բայց ի՞նչ կնշանակէ հայերէն՝ «մարդկերանց հետ դժբաղդութիւն պատահել» խօսքը: Մի՛ գուցէ՝ ասել ուզած լինի թէ՛ մարդոյ կորուստ կամ անձի փնաս չէ պատահել այդ դժբաղդ արկածին մէջ: Եւ միթէ այս իմաստը բացատրելու համար աւելի յարմար բառ կամ ասացում՞ արդեօք կոպակասէր հայերէն լեզուի մէջ, — ճշմարիտ՝ հետադրական գործակալութիւնը եթէ իմանար թէ իւր հեռագիրներն այս աստիճան ողորմելի և չարաչար կերպիւ սպաննուելու վրայ են Մշակի մէջ, նոյն վայրկենէն կրդագարէր հեռագիր հաղորդելէ Մշակի:

Անցեալներն ալ, չե՛մ յիշեր որ թուահամարին մէջ, ԱՐՁԱԿԱՆՔ շարաթաթմերթի ի լոյս ընծայումն և հրատարակութեան սկսումն ծանուցանելըն առթիւ կասէր «ՓՈՐՁի նախկին խմբագիր — տնօրէն Պ. Արզար Յովհաննիսեանցի տնօրէնութեամբ և խմբագրապետութեամբ . . . »:

Փափաղելի էր մեզ իմանալ որ եթէ ՓՈՐՁի նախկին խմբագիրն էր Պ. Արզար Յովհաննիսեանցը, արդեօք այժմու կամ վերջին խմբագիրն ո՞վ էր եղած . . . Սակայն կրկարծեմք զիտնալ թէ Մշակ այդ բառով կամէր ասել «երբեմն ՓՈՐՁի խմբագիր — տնօրէն . . . » իսկ երբէ՞ն և շախի՞ն բառից իմաստի տարբերութիւնը չզիտնալովք՝ ընկած է այդ անիմաստ կամ շփոթ իմաստի նախադասութեան ողորմելի և ծիծաղելի վիճակին մէջ: Աստուած ազաւէ զինքն:

ԲԱՆԱԴԱՏՆ՝

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք.

Ահա՛ն ինչն իւր գրքիս — Հոռով՝ քաղաքից 20 Յունվարի (1 Փետրվարի) НОВОСТЬ (նշխար — նորութիւն) Ռուս օրաթերթին հաղորդումն: «Մենք ճշմարիտ որ ապրումենք այնպիսի մի ժամանակում, երբ ոսկեհորթի մէն բան մատաղ են անում՝ հայրենիքի բարեկեցութիւնը, համազմունքը, պատիւը և սեպհական որդիքն անգամ: Ասեալ մարդիկ ասումեն, թէ առաքինութիւնը և թէ մարդութիւնը կախուած են պայմաններից, որոնց մէջ զրուած է մարդը: Պէտք է որ լաւ լինին պայմանները այսինքն հասարակութիւնը, որ չզոյացնէ այսպիսի ծիւղիներ, որոնց այս օրերում գատեցին այստեղ Հոռով՝ քաղաքում: Հոգիս սարսափումէ մտաբերելու ժամանակ, թէ ի՛նչ զարհուրելի յանցանքներ գործելու ընդունակ է մարդը փողի համար: Նիարդոյի մէջ պանդոկապահ Անտոնիո Բլանկ և նորա ամուսինը ունէին միակ դուստր Մարգարիտ անուն՝ քսան ամաց: Աղջիկը նշանաւոր գեղեցկութիւն ունէր, նորա շիկակարմիր մազերը, գեղեցկակազմ հասակը, կանոնաւոր դէմքի գծագրութիւնները և անուրի պէս սև աչքերը ստիպումէին շատ երիտասարդների սիրտը գո-

ղալ. Բայց Մարգարիտը պարկեշտ էր և ամօթխած, չէր նկատում երկըր-
պագուներին, ջանք էր անում նրանցից խոյս տալ և առհասարակ չունէր
ամուսնանալու ցանկութիւն. Սակայն հասաւ և նորա ժամանակը. նորա
երկրպագուներից մէկը շատ սիրաճարուեց և երկուսն էլ սկսան միմեանց
բացատրել իւրեանց սիրտը և խնդրել ծնողաց օրհնութիւնը. Մայրը և
հայրը թէպէտ չէին ցանկանում իւրեանց դուստրն ամուսնացնել, բայց
ստիպուեցան տալ իրենց համաձայնութիւնը. մերժելու պատճառ չունե-
լով. Ծնողաց օրհնութիւնը ստացան և սիրաճարուած նշանածները այդ
բախտաւոր օրը մինչև մութը նստած էին առանց իրարից աչք թնքելու.
Գիշերը ուշ՝ ամենը քաշուեցին իւրեանց սենեակները. Մարգարիտը մտաւ
անկողին, բայց քնել չէր կարողանում: նորա սաստիկ բորբոքուած երեւ-
կայութիւնը շինուակը օգոյնն ամրոցներ իւր սիրելւոյ հետ ապագայ ըն-
տանեկան կեանքի մէջ: Յանկարծ, նա լսումէ իւր ծնողաց ձայնը, որոնք
քնած էին կից սենեկումը.

«Ի՞նչ պէտք է մեզ անել Մարգարտի համար: — ասումէ հայրը. — նա
մարդ է ուզում. պէտք է նրան տալ այն դրամագլուխը, որը կտակել է
նրան նորա տատը »: « Այո՛, անախորժ դրութիւն է: — պատասխանումէ
մայրը »: « Ա՛չ, ես փողերից ձեռք չեմ քաշիլ, — ազգու կերպով շշնջաց
հայրը. — աւելի լաւ կլինի, գիտես, որ . . . սպանենք Մարգարտին և
հեաքը պարտակենք ջրում »: Անբախտ աղջիկը պարզ լսումէր այդ խօս-
քերը, լսումէր և չէր հաւատում ինքն իրան. նրան այս բոլորը զարհու-
րելի երազ էր թվում: Սակայն նրա քունը շտարաւ. Լոյսը բացուել
էր արեգակի առաջին ճառագայթները արդէն թափանցել էին պատու-
հանից նորա սենեակը, իսկ նա բոպէ անգամ չէր մտածում այդ եղիլու-
թիւնը. նա թուաւ իւր անկողնից, հագնուեց և տանից դուրս փախաւ.
Քանի մի ժամ փողոցներում աննպատակ անց ու դարձ անելով, նա
վերջապէս վճուեց գնալ մօրաբորջ մօտ և ամենը պատմել նրան. Այս
վերջինը, ինչպէս և պէտք էր սպասել, չհաւատաց Մարգարտի խօսքերին.
հաստատելով, որ այդ բոլորը երազումն է երեւցել. Իսկ Մարգարտի
ծնողքը նոյնպէս զբոյցին, թէ գործը վատ է, թէ նրանք իւրեանց զի-
շերուայ խօսակցութեան մէջ չափազանց յափշտակուեցան, ուշ չդարձ-
նելով այն հանգամանքի վրայ, որ նրանց դատեր սենեակը կից էր իւր-
եանց սենեկին. Հարկաւոր էր գործը կատակի փոխել, համարյններով և
քնքուշ սիրով հաւատացնել Մարգարտին, թէ նրանք անսահման սիրով
սիրումեն նրան. Բոլոր դուրս հեռուները, ինքն ըստ ինքեան ի հարկէ
Մարգարտի վերադառնալը եղաւ ծնողաց տունը. Քանի մի օր անցնելուց
յետոյ Մարգարիտը նստած էր պատուհանի մօտ և պարտպած էր գոր-
ծով. յանկարծ զարհուրելի հարուած նրա գլխին խլացրեց նրան. նա
անզգայ վայր ընկաւ գետինը. Հարուածը կրկնուեցաւ միւսամղամ և ու,
նրան հարուածեցին նորա սիրելի ծնողքը ծանր կերպով. « Մեռաւ. —
գտաց հայրը մտիկ տուր, նրա երեսի վրայ արխնի նշան, իսկ ականջ-

ներից արիւնը վաղու մէջ : « Այո՛, մեռաւ. ուրախ կերպով հաստատուեք մայրիկը. — այժմ՝ մեզանից չեն վեր առնի փողերը : Եւ, արդարեւ, ապա- բախտ աղջիկը ջարդուած գլխով, բոլորին արիւնով շաղախուած՝ պահած, տարածուած էր գեանի վրայ՝ նրա երկար, թանձր հիւսերը տիպուած էին և ծածկուեալին նորա ուսերը և մէջքը, նորա վարդակարմիր շրթունքը միայն թոթովելով սիրոյ ջերմ՝ խօսքեր, այլազունեցան, սեւ աչքերը մթնեցան : Այս տեղ սիրելի հայրը սկսեց այս խօսքերը. « գիտե՞ս ի՞նչ է, կտրենք Գարգարտի հիւսերը. մտիկ տուր, ի՞նչպէս թանձր են և երկար և ի՞նչ զարմանալի գոյն ունին : Մազ շինողները կտան մեզ գօնէ նրանց համար 300 ֆրանկ : » « Այո՛, այո՛, ի հարկէ, գոռաց մայրիկը. յետոյ, նա մէկ վայրկեանում վազեց մկրատ բերելու, և գեղեցիկ Գարգարտի հիւսերը կտրուեցան : Սրանից յետոյ շարագործները դուրս եկան տանից, սպասելով գիշերին, որ դատեր դիակը թագցնեն մէկ տեղում : Այն ինչ անբախտ աղջիկը մեռած չէր, — նա գտնուեալէր միայն խորին ուշաթափութեան մէջ : Մէկ քանի միջոցից յետոյ Գարգարտը աչքը բաց արււ, մտաբերեց բոլորը՝ ինչ որ իւր հետ պատահել էր, սողալով դէպի դուռը, բաց արեց նրան և սկսաւ օգնութիւն կանչել : Դրացիները, ոստիկանները վազեցին, եկան, վիրաւորին ուղարկեցին հիւանդանոց, իսկ շարագործներին բանտարկեցին, վեր առնելով պահարանից նոցա դատեր արիւնաշաղախ հիւսերը : Անբախտ աղջկան իսկոյն բժշկական օգնութիւն հասցրին : Դժուար է վճուարար ասել, կմնա՞յ արդեօք նա կենդանի՝ թէ ոչ : Իցէ թէ նրան կիրակէ իւր ջահելութիւնը և իւր նշանածի ջերմ՝ սէրը, որը մօտ է խելագարուելու : »

* * *

Անտիգէ կալուածատէրէն հեղեմուքը. — Մի և նոյն տեղից նոյն օրաթերթին գրուեան : « Գարինացի դուղացի Չէզարիօ ապրելով Լէչէում ամուսնացաւ Պետրօնիլլա Միչէլլի անուն մի երիտասարդ այրի կնոջ հետ : Այրը յայտնի էր իւր դաժան և կասկածոտ բնւորութեամբ. կինը ընդհակառակը զանազանվուեալ բարութեամբ և հեղութեամբ : Ամուսնութիւնից քիչ յետոյ, Պետրօնիլլա համոզուեցաւ իւր սխալանքի մէջ. նորա ամուսինը միշտ կասկածոտ էր և անողորմ շարշարուեալ նրան : Մէկ տարուց յետոյ նրանց որդի ծնաւ, որը շուտով մեռաւ : Գայրը դառնակակիծ ողբումէր որդւոյ մահը, նա համարեա՞ թէ միայնակ էր. ամուսինը երևուեալ տանը միայն նորա համար, որ նրան ձեծիս Պետրօնիլլա ընդունեց իւր մօտ դաստիարակելու մի չորս տարեկան որբուկ աղջիկ Գարթամ Արօչէփիսսա անունով, այնինչ Չէզարիօյի կասկածաւորութիւնը օր ըստ օրէ աճումէր : Միասին ապրելու ոչ մի հնարութիւն չկար անբախտ կնոջ համար : Պետրօնիլլա դուրս գնաց ամուսնւոյ տանից և բնակեցաւ մի առանձին բնակարանի մէջ : Մատաղտհաս կնոջ կենցաղավարութիւնը կատարելապէս անպարսաւ էր, նա ոչ միայն չէր նայում ոչ մի տղամարդի վրայ, այլ և ոչ ոքի էլ չէր երևում, բայց նորա մարդը

այդ շէր նկատում: Նա համեզուած էր, որ կինը զրժուեւ նրան: Մէկ մտածելով զիշեր Զեզարիո մտաւ սննեակը, ուր նստած էր նորա կինը իւր փոքր որբուկի հետ: «Պու պէտք է մեռնես»: — բարձրաձայն ասաց Զեզարիո քնից գարձնած կնոջը: Անբախտը սկսեց աղաչել անպիտանին: որպէս զի բացատրէր իրան պատճառը, որն ստիպել է նրան այսպիսի զարհուրելի որոշումն անել: Մարիամիկը անկողնից վեր թռաւ, հեկեկալով փաթաթուեց Զեզարիոյի ձեռքերին, աղաչումէր նրան խղճալ իւր մօր վրա, բայց ոչինչ չօգնեց, Առանց որ և իցէ բացատրութեան, ճիւղը վեր առաւ պարտնը օղճիտ (ПОТЛЯ) շինեց, ձգեց կնոջ պարանոցը և սկսաւ խեղդել: Թոյլ զոհը չկարողացաւ երկար միջոց մըցել մարդասպանի հետ և հոգին արձակեց, Անբախտը կնոջ հետ Զեզարիո սկսաւ ձեռք առնուլ որբուկին: Ահագին բուխարին լցրեց մի շալակ փայտ, վրան ածեց նուրթ, և երբ որ բոցը սկսաւ բարձրանալ, ձգեց Մարիամին կրակը շնայելով նորա աղիխորով աղաչանքին և ծածկեց կափարիչով: Այդ ճիւղը մարդկային ազգի հրէշը, համբուրութիւնը անգամ տարաւ խուփը բռնել այնքան՝ որ մինչև անբախտ աղջկայ զիակը ածուխ դարձաւ: Զեզարիո բանտարկուած երկար միջոց շնոստովանուեց իւր յանցանքը: Բայց երազի մէջ ցնորքը նրան մատնեց: Նորա բանտի ընկերները լուռէին ամեն զիշեր փնջպէս չարագործը գոռումբր: «Մեռիր, մեռիր, ես կամենումմ քեզ խեղդել»: և այդ միջոցին ձեռքով էլ նշան էր անում: Յետոյ շատ շանցած՝ բոլորը խոստովանուեց, Այս օրերը երգուեալներին ներկայացաւ դատարանում՝ այդ զարհուրելի չարագործը, Ժողովուրդը, երգուեալները և դատարանը բոլորովին սարսափեցան, երբ Ժանդարմները բերին յանցաւորին: «Մեղաւոր է արդեօք նա յիշեալ չարագործութեանց մէջ»: այս հարցին երգուեալները ստորասական պատասխանը տուին զիջողութեան նշան անգամ՝ ցոյց չտալով դատապարտելոյն: Պատարանը վճռեց Զեզարիոյին մահուան պատժի ենթարկել, կախ տալով, Հրէշը բողոք տուեց, բայց լսուեւ, որ հասարակութիւնը կպահանջի Զեզարիոյին ենթարկել, մահու պատժի, թէպէտ Իտալիայում այս պատիժը կայ միայն (de jure):»

* * *

Մանկական հիւանդութեանց բժիշկ պ. Էդելբերգ իրրեւ նախապաշտպանողական միջոց ընդդէմ կոկորդացախի (բողազացախի) (дифтеритъ) խորհուրդ է տալիս մի զրգալ սոլիտուր (салициловая сода) խառնել մի բաժակ մաքուր ջրի մէջ և այդ ջրով առաւօտ և իրիկուն ողողել կոկորդը բողազը:

Նորանից յետոյ հարկաւոր է ամենայն օր զննել կոկորդը և երբ նկատուին նորանում գեղնաւուն բծեր, որքան կարելի է շուտով, զիմել բժշկին և մինչև բժշկի գալը մի կերակուրի զրգալ սոլիտուր մի կերակուրի զրգալ ցլիցերին (глицеринъ) և թէյի զրգալի քառորդաչափ սալիցիլովեալ թթու (салициловая кислота) խառնել իրար հետ (ի հարկէ առաջուց պէտքէ պատրաստի ունենալ) փոքրիկ, փափուկ վրձինը թաթիկել յիշեալ խառնուրդի մէջ և կէս ժամը մի անգամ քսել այն բծերին:

Այս վարակիչ հիւանդութիւնից չվարակուելու համար հարկաւոր է մի շիշ (бутылка) մաքուր ջրի մէջ խառնել մի կերակուրի զրգաւ Կարբօլաթթուաւ (карболовая кислота) և նորանով սրակել այն տան մէջը, ուր տիրուեալ այդ հիւանդութիւնը: Ար ընտանիքի կամ որ շրջանի մէջ պատահի այս հիւանդութիւնով բռնուած, անմիջապէս պէտքէ նորան զատել առողջներից սոցա վարակումից պաշտելու համար:

Վերոյիշեալ բոլոր դեղորայքը 30—30 կոպէկ արժողութիւնից աւելի չեն:

Ս. ՍԻՆՕԳԻ ԹՐԱԳՐՆԵՐԻՑ:

Ի 16 Հոկտեմբերի 1881 ամի. որովհետև Վեհ. Հայրապետ Ազգիս Գէորդ Գ. ի Կոնստանտնուպոլսի Ս. Սինօցի ի հրահանգումիւն ի ՅՅունվարի 1871 ամի հիմնեալ ի վերայ Եկեղեցական կանոնաց (Բարսղի Կեսարացոյն յօդ. 2ԾԳ. եր 10.) օրինադրէ. «Որ որ այրիացեալ լինի յերիտասարդութեան հասակի իւրոյ, Սոյլատրեմք այնպիսեաց անարգել մտանել յերրորդ ամուսնութիւն. իսկ վասն չարտրդի ոչ ունիմք կանոնս ի նախնեաց, եւ բաւ է նոցա չմտանել ի չարրորդ ամուսնութիւնս այլ եթէ ոչ ունիցին ժոյժ՝ ներկով ասեմ եւ ոչ հրաման տայով՝ Սոյլ տացի այնպիսեաց առ ի ոչ անկանելոյ ի մեղս մարդկային օկարութեամբս, եթէ ոչ ունիցին արդիւս ինչ ախտի կամ այլ սրակասութիւն ըստ բժշկական օրինաց, որ ապականել գիտէ զճնտնդս կամ վաղամեակի առնել զամուսինն. » այլ սրովհետև Վաղարշապատցի Մեղքոն Մերզաքանեանց մտեալ է ի չարրորդ ամուսնութիւն ի վաթմնամեայ հասակի իւրում ընդ Երեսնամեակէն ընդ Երեսնամեայ Մարիամու Բաղդասարեան, եւ այն առանց նախընթաց պատշաճաւոր լուծման եւ Սոյլատրութեան Հոգեւոր Բարձրագոյն իշխանութեան, որ հակառակ է Եկեղեցական կանոնաց եւ մտաց կոնստանտնուպոլսի Վեհափառ Հայրապետի, ուստի պատկն վերոյիշեալ Մեղքոնի Մերզաքանեանց ընդ Մարիամու Բաղդասարեան համարել անվաւէր:

Ի 13-ն Յունվարի 1882 ամի. որովհետև Կարապետ քահանայն Մխիթարեանց Կարմիր — աղլիւք դեղջ առանց հրամանի կատարեալ է զաններկիս եւ զանՍոյլատրելի պատկ Մկրտչի Աղամեան ընդ Ղուսաշայ Արսենեանց ի մերձաւոր խնամութեան աստիճանի նոցին, վասնորոյ զաղարեցուցանել զնա ի քահանայադորձութեան զամս հրիս եւ ապաշխարեցուցանել ի մի ի վանօրէից վիճակին. իսկ զՍարգիս քահանայն Առաքելեանց Նորաշէն դեղջ զեղբայրն հարսնացոյի ենթարկել քառամեօրեայ ապաշխարանաց պատժք եւ սղօթիւք առ զրան եկեղեցոյ տեղոյ առանց փիլօնի, եւ զպօրէն կատարեալ զպատկն յիշեալ Մկրտչի Աղամեանց ընդ Ղուսաշայ Արսենեանց համարել անվաւէր:

Ի 29 Յունվարի 1882 ամի. զՊօղոս քահանայն Փոռ պեղջ Հնոյն Նախիջուանի վասն ազգի ազգի անկարգութեանց իւրոց եւ վասն կատարելոյ առանց հրամանի ըզ՛հաս պատկ, զաղարեցուցանել ի քահանայադորձութեան անսահման ժամանակաւ եւ առաքել ի վանս ինչ ի խրատ եւ յուղղութիւն նորա եւ ի զգուշութիւն այլոց քահանայից: